Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Խորվաթիայի Հանրապետության կառավարության միջև տնտեսական համագործակցության մասին» Համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Խորվաթիայի Հանրապետության կառավարության միջև տնտեսական համագործակցության մասին» համաձայնագիրը մշակվել է Խորվաթիայի Հանրապետության հետ առևտրատնտեսական բնագավառը կանոնակարգող անհրաժեշտ իրավապայմանագրային դաշտի ձևավորման և երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների կանոնակարգման նպատակով:

Նշված համաձայնագրի կնքումը հնարավորություն կընձեռի իրավահավասարության և փոխշահավետության հիման վրա երկու երկրների միջև զարգացնել երկարատև տնտեսական հարաբերություններ, ստեղծել տնտեսական կապերի զարգացման համար բարենպաստ պայմաններ, բարձրացնել գործարար հանրույթի ակտիվությունը:

Համաձայնագիրը հանդիսանում է տնտեսական բնույթի տիպային Համաձայնագիր, նման բովանդակության համաձայնագրեր Հայաստանի Հանրապետության կառավարությունը կնքել է բազմաթիվ երկրների հետ:

Համաձայնագրով նախատեսվում է տնտեսական փոխշահավետ համագործակցության զարգացումն ու դիվերսիֆիկացումը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում:

Համաձայնագրով նախատեսվում է նաև ստեղծել տնտեսական համագործակցության հարցերով հայ-խորվաթական միջկառավարական Հանձնաժողով:

Համաձայնագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության կողմից որդեգրած արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններին և նպատակներին:

Ելնելով վերոհիշյալից, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը նպատակահարմար է համարում վերոնշյալ Համաձայնագրի կնքումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԶԻԶՅԱՆ